

ՄԱՍ 3.

ՀԱՅԱՍՏԱՆ. ՈՉ ԵՅՈՒԹԱԿԱՆ
ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 4. Սոցիալական տրանսֆերտները Հայաստանում և դրանց ներգործությունն անհավասարության ու աղքատության կրճատման գործում

4.1. Սոցիալական տրանսֆերտների համակարգը Հայաստանում

Սոցիալական տրանսֆերտները ներառում են կենսաթոշակները և դրամական սոցիալական աջակցությունը: Կենսաթոշակը Հայաստանում սոցիալական տրանսֆերտների ամենատարածված տեսակն է, եկամտի կարևոր աղբյուր է բնակչության, հատկապես՝ կենսաթոշակառուների համար. այն շատ դեպքերում եկամտի միակ աղբյուրն է, ուստի այդ խմբի բնակչության բարեկեցության աստիճանը պայմանավորված է կենսաթոշակի չափով (Աղյուսակ 4.8-ում ներկայացված է Հայաստանում կենսաթոշակառուների թվաքանակն ըստ կենսաթոշակի տեսակների):

Հայաստանի Հանրապետությունում դրամական սոցիալական աջակցության ոլորտի ամենամեծ ծրագիրը, ինչպես բնակչության ընդգրկվածության, այնպես էլ ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով՝ ընտանեկան նպաստի (ԸՆ) ծրագիրն է¹:

4.2. Աղքատության մակարդակի կրճատման վրա սոցիալական տրանսֆերտների ազդեցության գնահատումը

Թեպետ սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեցտարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի բավական սահմանափակ մասը կազմել (2019թ.՝ 6.9%): Այդուհանդերձ, սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը, և թեպետ դրամական սոցիալական աջակցություն ստացող ոչ բոլոր ընտանիքներն են կարողանում հաղթահարել աղքատությունը, այդ աջակցությունը ստանալու արդյունքում էապես կրճատվում են աղքատության թե խորությունը, թե արությունը:

2019 թվականի գնահատականները ցույց են տալիս, որ եթե բոլոր տեսակի սոցիալական տրանսֆերտների (այդ թվում՝ կենսաթոշակների և սոցիալական աջակցության նպաստների) վճարումը դադարեցվի, և տնային տնտեսությունները չկարողանան այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 16.6 տոկոսային կետով (43.8%-ից մինչև 60.4%):

Կենսաթոշակները՝ որպես սոցիալական տրանսֆերտների ամենամեծ բաղադրիչ, զգալի ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում՝ այն կրճատելով 14.2 տոկոսային կետով: Այդուհանդերձ, փոքր չէ նաև դրամական սոցիալական աջակցության, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտների դերն աղքատության կրճատման գործում: 2019 թվականին ԸՆ-ի ծրագիրը 1.7 տոկոսային կետի չափով ազդեցություն է ունեցել աղքատության կրճատման վրա:

2019 թվականին ԸՆ-ի նպաստառուների 76.2%-ը գտնվում է ամենաստորին երկու քվինտիլներում՝ 2018 թվականի 76.5%-ի համեմատ: Նմանապես, վճարված բոլոր ընտանեկան նպատների 80.6%-ը 2019 թվականին բաժին է ընկել ամենաաղքատ երկու քվինտիլներին՝ 2018 թվականի 78.3%-ի համեմատ, ինչը նշանակում է, որ աջակցության հասցեականությունը բարելավվել է:

¹ Սույն փաստաթղթում նշված ընտանեկան նպաստի ծրագիրը ներառում է դրամական աջակցության երկու տեսակ՝ ընտանեկան նպաստը (մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող անապահով ընտանիքներին տրամադրվող դրամական աջակցություն) և սոցիալական նպաստը (մինչև 18 տարեկան երեխաներ չունեցող անապահով ընտանիքներին տրամադրվող դրամական աջակցություն): Այս երկու նպաստները ընտանիքի կենսամակարդակի բարձրացման ուղղված աջակցության ծրագրի մաս են կազմում:

Մեթոդաբանությունը

Երկրում աղքատության մակարդակի վրա սոցիալական պաշտպանության ծրագրերի ներգործությունը գնահատվում է ՏՏԿԱՀ-ի միջոցով: Վերլուծությունն անդրադառնում է սոցիալական պաշտպանության նպատակով հատկացվող տրանսֆերտների երկու հիմնական տեսակի՝ կենսաթոշակներին և պետական դրամական աջակցությանը, որում ներառված են բոլոր տեսակի սոցիալական դրամական աջակցությունները: Բացառությամբ ընտանեկան նպաստի՝ բոլոր այլ տեսակի սոցիալական նպաստները հատկացվում են բնակչության շատ նեղ խմբերի, ինչի արդյունքում նման նպաստառուները միանգամայն փոքր մաս են կազմում ՏՏԿԱՀ-ում, և նրանց առնչվող դիտարկումների քանակը չի բավարարում վիճակագրորեն նշանակալի եզրահանգումներ կատարելու համար:

Աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և պետական դրամական աջակցության) ներգործությունը գնահատելու համար կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը. հետազոտությամբ դիտարկված աղքատության մակարդակի արդյունքները («հետտրանսֆերտային» մակարդակ) համեմատվել են այն արդյունքների հետ, որոնք կստացվեին, եթե այդ տրանսֆերտները չվճարվեին («նախատրանսֆերտային» մակարդակ): Տնային տնտեսությունների համար հաշվարկվել է «նախատրանսֆերտային» սպառման ագրեգատը՝ հաշվարկված ընդհանուր սպառման ագրեգատից հանելով սոցիալական տրանսֆերտների գումարը (կենսաթոշակների գումարը, դրամական սոցիալական աջակցության գումարը, կամ երկուսը միասին)՝ ելնելով այն վարկածից, որ սոցիալական տրանսֆերտների ամբողջ գումարը տնային տնտեսությունների կողմից սպառվում է (իրավիճակ, որը միանգամայն բնորոշ է Հայաստանի նման ցածր եկամուտներով երկրներին): Այս մեթոդաբանությունը հատկապես կարևորվում է սոցիալական աջակցության հասցեականության բարելավման տեսանկյունից: Սոցիալական աջակցության համար թիրախային բնակչությունը «նախատրանսֆերտային» աղքատներն են, քանի որ սոցիալական աջակցություն ստանալուց հետո աղքատ ընտանիքների մի որոշ խումբ հաղթահարում է աղքատության շեմը, ուստի «հետտրանսֆերտային» բնակչությունը որպես թիրախային խումբ դիտարկելը կարող է զգալի անճշտություններ պարունակել:

Աղքատության մակարդակի վրա կենսաթոշակների ներգործությունը գնահատվել է «նախատրանսֆերտային» աղքատության մակարդակը համեմատելով կենսաթոշակ ստանալուց հետո աղքատության մակարդակի հետ, այսինքն՝ որպես հիմք ընդունելով «կենսաթոշակ ստանալուց հետո», բայց առանց «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» աղքատության մակարդակը¹:

¹ Հետազոտությամբ ստացված արդյունքները որոշակի վիճակագրական սխալով (շեղմամբ) են ներկայացնում ՀՀ բնակչության պատկերը: Նման վիճակագրական սխալ պարունակում են նաև «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակները: Աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործությունն ունի վիճակագրական նշանակություն, եթե «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության միջին մակարդակների վստահության միջակայքերը չեն համընկնում:

Բնչայիսի ն է Հայաստանում սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մակարդակի վրա

2019 թվականին Հայաստանում սոցիալական նպաստների և կենսաթոշակների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 453.2 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 6.9%-ը (2008 թվականի 207.9 միլիարդ դրամի կամ ՀՆԱ-ի 5.8%-ի և 2018 թվականի 426.2 միլիարդի դրամ կամ ՀՆԱ-ի 7.1%-ի համեմատ): Ամենամեծ սոցիալական տրանսֆերտները կենսաթոշակներն են, որոնք ներառում են տարիքային, զինվորական և սոցիալական կենսաթոշակները:

Ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, 2019 թվականին ԸՆ-ը որպես եկամտի աղբուր նշել է տնային տնտեսությունների 13%-ը, ինչը մի փոքր բարձր է 2018 թվականի համապատասխան ցուցանիշից և փոխում է վերջին տարիներին արձանագրված նվազման միտումը: Կենսաթոշակները որպես եկամտի աղբուր նշել է տնային տնտեսությունների 50.7%-ը, ինչը զիջում է 2018 թվականի համապատասխան ցուցանիշին, մինչդեռ երեխայի ծննդյան և խնամքի հետ կապված նպաստները որպես եկամտի աղբուր նշել է տնային տնտեսությունների 2.9%-ը, ինչը գերազանցում է 2018 թվականի համապատասխան ցուցանիշը (Աղյուսակ 4.1):

Աղյուսակ 4.1. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության մասնաբաժինը, 2008-2019թթ.

<i>(տոկոսներով)</i>				
	Կենսաթոշակ	Ընտանեկան նպաստ	Երեխայի ծննդյան և խնամքի նպաստ	Այլ նպաստներ
2008թ.	50.5	15.3	0.5	3.7
2009թ.	51.9	12.2	0.7	4.2
2010թ.	52.5	13.4	1.1	3.1
2011թ.	53.3	10.2	1.1	3.2
2012թ.	53.9	13.5	1.4	2.6
2013թ.	53.7	12.2	1.0	1.6
2014թ.	55.2	13.3	1.3	2.3
2015թ.	54.0	13.5	1.7	2.1
2016թ.	52.4	13.6	1.3	2.7
2017թ.	55.5	12.9	1.4	0.3
2018թ.	52.8	12.6	1.3	1.8
2019թ.	50.7	13.0	2.9	Ա/Չ

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2008-2019թթ.

Նշում. ԱՉ նշանակում է, որ ՏՏԿԱՀ 2019-ով համադրելի տվյալ առկա չէ:

2019 թվականին սոցիալական տրանսֆերտները, այդ թվում՝ կենսաթոշակները, ԸՆ-ը և այլ դրամական սոցիալական աջակցությունը կազմել են Հայաստանի տնային տնտեսությունների մեկ չափահաս անձի հաշվով համախառն սպառման 27.4%-ը (Աղյուսակ 4.2): Տնային տնտեսությունների մեկ չափահաս անձի հաշվով համախառն սպառման կառուցվածքում սոցիալական տրանսֆերտները կազմել են սպառման ստորին քվինտիլում 37.6%-ը, իսկ վերին քվինտիլում՝ ընդամենը 16.7%-ը: Համախառն սպառման մեջ սոցիալական տրանսֆերտների ամենամեծ մասնաբաժինն ունեն կենսաթոշակները:

Աղյուսակ 4.2. Հայաստան. Տնային տնտեսությունների համախառն սպառման մեջ սոցիալական տրանսֆերտների մասնաբաժինը, ըստ սպառման քվինտիլների, 2019թ.

(տոկոս)

	Ընդամենը	Քվինտիլ				
		Ստորին	II	III	IV	Վերին
Կենսաթոշակ	23.9	28.2	29.2	27.2	22.7	15.6
Ընտանեկան նպաստ	2.8	8.0	3.8	2.1	1.5	0.7
Այլ սոցիալական աջակցություն	0.6	1.3	0.6	0.6	0.5	0.4
Բոլոր սոցիալական տրանսֆերտները	27.4	37.6	33.6	30.5	24.7	16.7

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Նշում. *Բոլոր քվինտիլները սահմանված են ըստ մեկ չափահաս անձի հաշվով սպառման:*

2019 թվականին Հայաստանի տնային տնտեսությունները սոցիալական տրանսֆերտներով (կենսաթոշակներ և դրամական սոցիալական աջակցություն) մեկ չափահաս անձի հաշվով միջինում ստացել են 16 099 դրամ: Այդ գումարի հիմնական մասը կազմել են կենսաթոշակները (14 425 դրամ):

Ըստ քվինտիլների դիտարկելիս, վերին երեք սպառման քվինտիլներում գտնվող տնային տնտեսությունները սոցիալական տրանսֆերտներով ստացել են շուրջ 17 000 դրամ, իսկ ստորին քվինտիլում գտնվողները՝ 12 345 դրամ: Սա հիմնականում բացատրվում է վերին քվինտիլներում միջին կենսաթոշակների ավելի բարձր մակարդակով: Ի հակադրություն սրա, ԸՆ-ի գծով տրանսֆերտները միջինում ավելի բարձր են ստորին քվինտիլում գտնվող տնային տնտեսություններում, որտեղ դրանք կազմում են մեկ չափահաս անձի հաշվով 2 535 դրամ՝ վերին քվինտիլում գտնվող տնային տնտեսությունների 680 դրամի դիմաց: Սա սպասելի է, քանի որ սոցիալական աջակցությունը, այդ թվում՝ ԸՆ-ն, կիրառվում է որպես աղքատության դեմ պայքարի գործիք: Մյուս կողմից, կենսաթոշակները, չնայած աղքատության հաղթահարման գործում իրենց կարևոր դերին, տրվում են այն անձանց, ովքեր իրավասու են թոշակ ստանալ իրենց կատարած վճարումների, այլ ոչ թե խոցելիության պատճառով:

Աղյուսակ 4.3. Հայաստան. Մեկ չափահաս անձի հաշվով միջին սոցիալական տրանսֆերտները, ըստ սպառման քվինտիլների, 2019թ.

(ՀՀ դրամ)

	Ընդամենը	Քվինտիլ				
		Ստորին	II	III	IV	Վերին
Կենսաթոշակ	14 425	9 462	13 422	15 591	15 700	16 175
Ընտանեկան նպաստ	1 331	2 535	1 757	1 166	1 023	680
Այլ սոցիալական աջակցություն	343	349	267	349	340	392
Բոլոր սոցիալական տրանսֆերտները	16 099	12 345	15 443	17 106	17 064	17 246

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Նշում. *Բոլոր քվինտիլները սահմանված են ըստ տնային տնտեսությունների մեկ չափահաս անձի հաշվով սպառման: Միջին արժեքները հաշվարկվել են՝ ելնելով սոցիալական տրանսֆերտների նպաստառու տնային տնտեսությունների բնութագրերից:*

Չնայած ՀՆԱ-ի մեջ սոցիալական տրանսֆերտների փոքր մասնաբաժնին՝ դրանք շարունակում են աղքատության հաղթահարմանն ուղղված կարևոր գործիք լինել: Եթե սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և դրամական սոցիալական աջակցության) վճարումը դադարեցվի, և աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը աղքատության վերին զծի համեմատ ներկայի 43.8%-ից կհասնի 60.4%-ի: Աղքատներն ավելի կաղքատանան, քանի որ աղքատության խորությունը՝ աղքատության զծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 10.1%-ից կհասնի 24.4%-ի: Բացի այդ, աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրության համաթիվը 3.4%-ից կհասնի 14.2%-ի (Աղյուսակ 4.4, սյունակ Ա):

Նման անբարենպաստ ազդեցությունն առավել նկատելի կլինի ծայրահեղ աղքատ բնակչության շրջանում, ովքեր պարենային աղքատության զծից ներքև գտնվողներն են: Եթե բոլոր սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և դրամական սոցիալական աջակցության) վճարումը դադարեցվի, և ծայրահեղ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա ծայրահեղ աղքատության մակարդակը 1.4%-ից կհասնի 16.6%-ի: Ծայրահեղ աղքատներն ավելի կաղքատանան, քանի որ աղքատության խորությունը՝ ծայրահեղ աղքատության զծի նկատմամբ նրանց միջին սպառման պակասուրդը 0.2%-ից կհասնի 7.7%-ի: Բացի այդ, ծայրահեղ աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրության համաթիվը 0.0%-ից կհասնի 5.4%-ի (Աղյուսակ 4.4, սյունակ Բ):

Կենսաթոշակները՝ որպես սոցիալական տրանսֆերտների ամենամեծ բաղադրիչ, աղքատության հաղթահարման առումով առաջնային դեր ունեն: Այդուհանդերձ, աղքատության բեռը հաղթահարելու գործում փոքր չէ նաև սոցիալական աջակցության, մասնավորապես՝ ընտանեկան նպաստի ներգործությունը: Սոցիալական աջակցությունը դադարեցնելը ոչ միայն կավելացնի աղքատության զծից ներքև գտնվող տնային տնտեսությունների քանակը, այլև կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացմանը: Եթե դադարեցվի միայն ընտանեկան նպաստի վճարումը, ապա աղքատության մակարդակը աղքատության վերին զծի համեմատ կավելանա 1.7 տոկոսային կետով (43.8%-ից հասնելով 45.5%-ի), իսկ ծայրահեղ աղքատության մակարդակն ավելի քան կկրկնապատկվի (1.4%-ից հասնելով 3.8%-ի): Ավելին, աղքատությունը կխորանա ու կսրվի, համապատասխանաբար՝ 1.8 և 1.3 տոկոսային կետով:

Ծայրահեղ աղքատության խորության և սրության վրա այս ազդեցությունն ավելի մեծ կլինի՝ խորությունը ավելի քան կքառապատկվի (0.2%-ից մինչև 0.9%), իսկ սրությունը 0%-ից կհասնի 0.3%-ի (Աղյուսակ 4.4, սյունակ Բ): Այս ցուցանիշները վկայում են, որ ընտանեկան նպաստների ազդեցությունը հատկապես մեծ է Հայաստանում ծայրահեղ աղքատության հաղթահարման տեսանկյունից:

Աղյուսակ 4.4. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա, 2019թ.

(տոկոսներով)

	Ա. Աղքատներ			Բ. Ծայրահեղ աղքատներ		
	Աղքատության մակարդակ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն	Աղքատության մակարդակ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
«Նախատրանսֆերտային» մակարդակ (նախքան կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալը)	60.4	24.4	14.2	16.6	7.7	5.4
Նախքան կենսաթոշակ ստանալը, սոցիալական աջակցություն ստանալուց հետո	58.8	21.9	11.9	13.5	5.8	3.9
Կենսաթոշակ ստանալուց հետո, նախքան սոցիալական աջակցություն ստանալը	46.2	12.5	5.1	4.4	1.2	0.5
Կենսաթոշակ և բացառությամբ ԸՆ-ի սոցիալական աջակցություն ստանալուց հետո	45.5	11.9	4.6	3.8	0.9	0.3
«Հետտրանսֆերտային» մակարդակ (կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալուց հետո)	43.8	10.1	3.4	1.4	0.2	0.0

Աղբյուրը. *SSԿԱՀ 2019թ.*

Նշում. «Աղքատ» տերմինը վերաբերում է աղքատության վերին գծից ներքև, իսկ «ծայրահեղ աղքատ»-ը՝ պարենային աղքատության գծից ներքև գտնվող բնակչությանը:

Ինչպիսի՞ն է Հայաստանում սոցիալական տրանսֆերտների ներգործությունն անհավասարության վրա

SSԿԱՀ-ի գնահատականները ցույց են տալիս, որ սոցիալական տրանսֆերտները նպաստում են նաև սպառման բաշխվածության միջև անհավասարության նվազեցմանը: Սպառման ագրեգատի բաշխվածության «նախատրանսֆերտային» Ջինիի գործակիցը 2019 թվականին 0.351-ից նվազելով կազմում է 0.274, երբ սպառման ագրեգատին ավելացվում են կենսաթոշակները, իսկ բոլոր սոցիալական տրանսֆերտների ավելացման (այսինքն «հետտրանսֆերտային» վիճակի) պարագայում սպառման անհավասարությունը կրճատվում է մինչև 0.279 (Աղյուսակ 4.5):

Աղյուսակ 4.5. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունը սպառման ագրեգատի բաշխվածության անհավասարության վրա (սպառման ագրեգատի Ջինիի գործակիցները), 2008-2019թթ.

	«Նախատրանսֆերտային» մակարդակ (նախքան կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալը)	Կենսաթոշակ ստանալուց հետո, նախքան սոցիալական աջակցություն ստանալը	«Հետտրանսֆերտային» մակարդակ (կենսաթոշակ և սոցիալական աջակցություն ստանալուց հետո)
2008թ.	0.316	0.258	0.242
2009թ.	0.346	0.272	0.257
2010թ.	0.359	0.282	0.265
2011թ.	0.357	0.28	0.267
2012թ.	0.359	0.282	0.269
2013թ.	0.354	0.282	0.271
2014թ.	0.377	0.289	0.277
2015թ.	0.375	0.292	0.279
2016թ.	0.362	0.302	0.286
2017թ.	0.376	0.303	0.289
2018թ.	0.388	0.312	0.298
2019թ.*	0.351	0.274	0.279

Աղբյուրը. *SSCULZ 2008-2019թթ.*

Նշում. *2019 թվականի տվյալները նախորդ տարիների հետ համադրելի չեն՝ պայմանավորված սպառման գնահատման մեթոդաբանության փոփոխությամբ:

4.3. Ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկվածությունը և ծրագրի հասցեականությունը

Աղյուսակ 4.6-ում ներկայացված է 2016-2019 թվականներին ԸՆ ծրագրում ընդգրկվածությունն ըստ «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների և աղքատության վերին զծից ներքև գտնվող բնակչության համար: ԸՆ ծրագրում ընդգրկվածությունը 2016-2018 թվականներին շարունակաբար նվազել է՝ 13.6%-ից հասնելով 12.6%-ի, սակայն 2019 թվականին այս միտումը փոխվել է, և ընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 13.0%:

Ըստ աղքատության վերին զծի աղքատների մեկ հինգերորդից փոքր-ինչ ավելին (21.2%) 2019 թվականին ընդգրկված է եղել ԸՆ ծրագրում (Աղյուսակ 4.6): Սոցիալական աջակցության այս նպաստների մասնաբաժինը մի փոքր ավելին է (23.2%): 2019 թվականին ԸՆ ծրագրում աղքատների ընդգրկվածության ցուցանիշը համադրելի չէ նախորդ տարիների հետ՝ պայմանավորված աղքատության զծի, ինչպես նաև սպառման և աղքատության չափման մեթոդաբանության փոփոխությամբ: Այնուամենայնիվ, ըստ սպառման քվինտիլների ընդգրկվածությունը ստորին քվինտիլում էապես բարելավվել է: 2017-2018 թվականներին անկումից հետո 2018-2019 թվականներին ԸՆ-ի և սոցիալական աջակցության նպաստների ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշն այդ քվինտիլում զգալիորեն աճել է (համապատասխանաբար 37.9%-ից մինչև 41.0% և 39.2%-ից մինչև 45.9%): Երկու տարվա ընթացքում նվազել է նաև սպառման վերին երեք քվինտիլների ընդգրկվածության ցուցանիշը. սա դրական զարգացում է՝ հաշվի առնելով, որ սոցիալական տրանսֆերտները նախատեսված են աղքատների համար: 2019 թվականին սպառման վերին երեք քվինտիլների ընդամենը 4.1% և 5.8%-ն են համապատասխանաբար ԸՆ և սոցիալական աջակցության նպաստներ ստացել: Սրանք փոքր-ինչ ցածր են, քան այդ քվինտիլների 2018 թվականի համապատասխան 4.7% և 6.1% ցուցանիշները:

Աղյուսակ 4.6. Հայաստան. Ընտանեկան նպաստ և այլ սոցիալական աջակցություն ստացողների բաշխումն ըստ «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների, 2016-2019թթ.

(տոկոսներով)

	Քվինտիլ						Աղքատներ
	Ընդամենը	Ստորին	II	III	IV	Վերին	
<i>Ընտանեկան նպաստ</i>							
2016թ.	13.6	35.3	12.9	10.3	6.4	3.2	24.3
2017թ.	12.9	39.0	13.3	6.8	3.7	1.8	31.3
2018թ.	12.6	37.9	11.1	7.1	4.6	2.5	32.1
2019թ.*	13.0	41.0	11.6	6.0	4.3	1.9	21.2
<i>Սոցիալական աջակցություն (ներառյալ ԸՆ)</i>							
2016թ.	17.1	43.4	15.6	11.6	8.2	6.5	30
2017թ.	14.4	40.4	14.7	7.6	5.3	4.0	32.8
2018թ.	13.9	39.2	11.9	8.7	6.0	3.7	33.3
2019թ.*	15.4	45.9	13.6	7.5	5.7	4.1	23.2

Աղբյուրը. SSԿԱՀ 2016-2019թթ.

Նշումներ. Բոլոր քվինտիլները սահմանված են ըստ մեկ չափահաս անձի հաշվով սպառման՝ նախքան սոցիալական աջակցություն (ներառյալ ԸՆ) ստանալը: «Աղքատ» տերմինը վերաբերում է աղքատության վերին զգից ներքև գտնվող բնակչությանը: *2019 թվականի տվյալները նախորդ տարիների հետ համադրելի չեն՝ պայմանավորված աղքատության զգի, ինչպես նաև սպառման և աղքատության չափման մեթոդաբանության փոփոխությամբ:

Աղյուսակ 4.7-ում ներկայացված է SSԿԱՀ հիման վրա ԸՆ-ի նպաստառուների և ԸՆ-ի գծով ընդհանուր դրամական վճարումների (նպաստների) բաշխումը՝ ըստ «նախքան ԸՆ ստանալը» սպառման քվինտիլային խմբերի: Տվյալները ցույց են տալիս, որ 2019 թվականին նպաստառուների 76.2%-ը «նախքան ԸՆ ստանալը» սպառման երկու ստորին քվինտիլներից են, ինչը մի փոքր գերազանցում է 2018 թվականի համապատասխան 75.5% ցուցանիշը: Ավելին, ԸՆ-ի գծով ընդհանուր դրամական վճարումների 80.6%-ը 2019 թվականին հատկացվել է սպառման երկու ստորին քվինտիլներին՝ 2018 թվականի համապատասխան 76.5% ցուցանիշի համեմատ: ԸՆ-ի միջոցների իրական «արտահոսքը» սպառման վերին (մասնավորապես՝ չորրորդ և հինգերորդ) քվինտիլների նպաստառուներին բաշխված միջոցներն են, այսինքն՝ ոչ կարիքավոր նպաստառուների այն 13.0%-ը (2018 թվականին՝ 12.2%-ը), որոնց հատկացվել է ԸՆ վճարումների 10.5%-ը (2018 թվականին՝ 11.2%-ը): Ինչ վերաբերում է բոլոր սոցիալական տրասֆերտներին (ներառյալ ԸՆ), 2019 թվականին վերին երկու քվինտիլների 14.3% (2018 թվականին՝ 13.8%) ոչ կարիքավոր նպաստառուները ստացել են հատկացումների 11.4%-ը (2018 թվականին՝ 13.8%-ը): Այս խնդիրը կենսաթոշակների տեսանկյունից չի դիտարկվում, քանի որ կենսաթոշակների թիրախային հասցեատերերը, ըստ էության, աղքատները և կարիքավորները չեն:

Աղյուսակ 4.7. Հայաստան. Ընտանեկան նպաստ և այլ սոցիալական աջակցություն ստացողների և վճարված գումարների բաշխումն ըստ սպառման քվինտիլների, 2019թ.

(տոկոսներով)

	Քվինտիլներ				
	Ստորին	II	III	IV	Վերին
<i>Ընտանեկան նպաստ, ըստ «նախքան ԸՆ ստանալը» սպառման քվինտիլների</i>					
Նպաստառուներ	57.2	19.0	10.7	8.8	4.2
Նպաստներ	63.5	17.1	8.9	7.3	3.3
<i>Սոցիալական աջակցություն (ներառյալ ԸՆ), ըստ «նախքան սոցիալական աջակցություն ստանալը» սպառման քվինտիլների</i>					
Նպաստառուներ	56.0	18.5	11.2	8.8	5.5
Նպաստներ	63.1	17.3	8.1	6.9	4.5

Աղբյուրը. SSԿԱՀ 2019թ.

Նշում. Բոլոր քվինտիլները սահմանված են ըստ մեկ չափահաս անձի հաշվով սպառման:

Աղյուսակ 4.8. Հայաստան. Կենսաթոշակատուների թվաքանակն ու կենսաթոշակի միջին չափն ըստ կենսաթոշակի տեսակի, 2019թ. տարեվերջ

	Կենսաթոշակատուների թվաքանակը, մարդ	Կենսաթոշակի միջին չափը, դրամ
Աշխատանքային	464 110	40 034
Զինձառայության հետ կապված	1 779	26 553
Այլ օրենքներով սահմանված	6 91	338 412
Կենսաթոշակատուների թվաքանակը	466 580	40 424

Աղբյուրը. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Գլուխ 5. Բնակչության բնակարանային պայմանները

ՏՏԿԱՀ-ներն առանձնահատուկ հնարավորություն են ընձեռում հավաքելու տվյալներ՝ բնակչության կենցաղային պայմանների, կոմունալ ծառայությունների մատչելիության և բնակարանային խնդիրներին առնչվող այլ հարցերի շուրջ: Այս գլխում ներկայացված է 2008թ.-ից 2019թ.-ն ընկած ժամանակահատվածում, ՏՏԿԱՀ-ների տվյալներով ստացված, բնակարանային պայմանների հիմնական ցուցանիշների մասին համեմատական վերլուծությունը:

5.1. Բնակչության բնակարանային պայմանները

Հայաստանում 2019թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասը (89.3%-ը) հանդիսանում է իր կացարանի սեփականատերը: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունները գլխավորապես բնակվում են բազմաբնակարան շենքերում՝ 74.6%, իսկ գյուղական վայրերում գերակշռում են առանձնատները՝ 89.1% (Աղյուսակ 5.1):

2019թ.-ին հանրակացարաններում ապրողների տեսակարար կշիռն ավելի մեծ է քաղաք Երևանում: Հանրակացարաններում, ժամանակավոր և այլ տեսակի կացարաններում բնակվող քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունը կազմում է 2.7% և 2.9%: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների մեծ մասն աղքատ է և պատկանում է 1-ին քվինտիլին:

Աղյուսակ 5.1. Հայաստան: Տնային տնտեսությունների բաշխումն ըստ կացարանի տեսակի, բնակավայրի, աղքատության մակարդակի և սպառման քվինտիլային խմբերի, 2019թ.

(տոկոսներով)

	Ընդամենը	այդ թվում՝ ըստ կացարանի տեսակի				
		առանձնատուն	բնակարան	հանրակացարան	Ժամանակավոր կացարան	այլ տեսակի կացարան
Ըստ բնակչության վայրի						
Քաղաք	100	22.7	74.6	1.1	1.5	0.1
այդ թվում ք.Երևան	100	21.1	77.4	1.3	0.1	0.1
Այլ քաղաք	100	24.5	71.7	0.8	3.0	0.0
Գյուղ	100	89.1	8.0	1.1	1.7	0.1
Ընդամենը	100	45.9	51.4	1.1	1.5	0.1
Ըստ աղքատության մակարդակի						
Ոչ աղքատ	100	43	55	1	1	0
Աղքատ	100	52	45	1	2	0
Ծայրահեղ աղքատ	100	59	34	1	4	2
Ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբի						
Առաջին	100	54.5	40.7	1.0	3.7	0.1
	100	47.6	49.6	1.3	1.3	0.2
Երկրորդ	100	44.9	53.1	0.9	1.0	0.1
Չորրորդ	100	45.5	51.9	1.2	1.4	0.0
Հինգերորդ	100	37.2	61.5	0.9	0.4	0.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Կացարանների ծանրաբեռնվածությունը լուրջ խնդիր է երկրում: 2019թ.-ի հետազոտության տվյալներով մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունը կազմել է 2.07 մարդ: Կացարանների ծանրաբեռնվածությունը կախված է աղքատության մակարդակից: Այսպես, հետազոտության տվյալների համաձայն, մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունն ամենացածր քվինտիլում 1.5 անգամ գերազանցում է ամենաբարձր քվինտիլում գրանցված ցուցանիշը: 2019թ.-ին այդ ծանրաբեռնվածությունն ամենացածր քվինտիլում կազմել է 2.65 մարդ տնային տնտեսության հաշվով, իսկ ամենաբարձր քվինտիլում՝ 1.73 մարդ: 1 000 տնային տնտեսությունից 556 տնային տնտեսությունում (2008թ.-ի՝ 877-ի, և 2018թ.-ի՝ 507-ի համեմատ) մեկ սենյականոց բնակարաններում գրանցվել է 2 և ավելի առկա մարդ:

2019թ.-ին գյուղական բնակչության ապահովվածությունն ընդհանուր մակերեսով բավական գերազանցել է քաղաքայինին (Աղյուսակ 5.2): Մինևույն ժամանակ, բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը գյուղում անհամեմատ ցածր է, քան քաղաքում: Խոհանոցի, սառը ջրի, ողողվող զուգարանի և լոգարանի (գործող) միաժամանակյա առկայություն գրանցվել է գյուղական վայրերի միայն 33.7% տնային տնտեսությունների մոտ, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 94.9%:

Աղյուսակ 5.2. Հայաստան. Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, 2019թ.

Ընդամենը	(քառ.մ.)
այդ թվում՝ քաղաքային	25.4
գյուղական	22.6
	29.8

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Հետազոտության արդյունքում ստացվել են նաև տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականներն իրենց բնակարանային պայմանների վերաբերյալ (Աղյուսակ 5.3):

Աղյուսակ 5.3. Հայաստան. Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները, 2019թ.

Ընդամենը	(տոկոսներով)					
	Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները					
	Հատ լավ	լավ	բավարար	վատ	Հատ վատ	
Հստ բնակության վայրի						
Քաղաք	100	1.8	25.2	59.2	10.9	2.9
այդ թվում՝ ք.Երևան	100	1.7	18.7	64.0	11.7	3.9
այլ քաղաք	100	1.9	32.3	53.8	10.1	1.9
Գյուղ	100	0.6	20.1	58.2	18.1	3.0
Ընդամենը	100	1.4	23.4	58.9	13.4	2.9
Հստ աղքատության մակարդակի						
Ոչ աղքատ	100	1.6	26.3	59.9	10.6	1.6
Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	100	1.1	19.1	57.4	17.8	4.6
Ծայրահեղ աղքատ	100	0.0	1.5	34.7	36.6	27.2
Հստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբի						
Առաջին	100	0.8	17.7	53.8	19.5	8.2
Երկրորդ	100	1.4	19.1	60.5	17.1	1.9
Երրորդ	100	0.9	22.3	62.6	12.1	2.1
Չորրորդ	100	1.5	26.2	58.7	11.7	1.9
Հինգերորդ	100	2.3	31.8	58.2	6.9	0.8

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Բնակարանային պայմանները համեմատաբար ավելի վատ են աղքատ և հատկապես ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում: Եթե բնակարանի մակերեսի սակավությունից դժգոհել է հարցմանը մասնակից ոչ աղքատ տնային տնտեսությունների 20.4%-ը, ապա աղքատ տնային տնտեսությունների շրջանում բնակմակերեսի չափից դժգոհել է տնային տնտեսությունների 29.6%-ը, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 49.4%-ը (Աղյուսակ 5.4.): Նույն կերպ ծայրահեղ աղքատների համար խնդիր է հանդիսացել ջեռուցման պակասը, քանդված պատեր և հատակ ունենալը, ինչպես նաև՝ խոնավությունը, քանդված փեղկեր և դռներ ունենալը, կանաչապատ գոտիների պակասը, կաթող տանիքը և վատ լուսավորվածությունը:

Աղյուսակ 5.4. Հայաստան. Բնակարանային պայմանների հետ կապված տնային տնտեսությունների բողոքները 2019թ.-ին ըստ աղքատության մակարդակի

(տոկոսներով)

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
Ընդամենը	100*	100*	100*
Մակերեսի սակավություն	20.4	29.6	49.4
Աղմուկ հարևաններից և շրջապատից	4.4	2.4	1.6
Վատ լուսավորվածություն	9.1	12.6	37.2
Ջեռուցման պակաս	37.5	54.3	80.7
Խոնավություն	18.9	26.2	56.6
Կաթող տանիք	10.7	15.5	38.3
Քանդված պատեր և հատակ	18.3	29.7	70.4
Քանդված փեղկեր և դռներ	16.2	24.8	49.5
Երթևեկության խցանում	5.7	6.0	6.0
Արդյունաբերական արտանետում	4.7	2.2	0.0
Վերելակը հաճախակի չի գործում	8.7	6.1	0.0
Ջրամատակարարումը վատ է	10.3	11.5	20.6
Աղբահանությունը վատ է	16.6	14.5	11.4
Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և բակերի սպասարկումը վատն է	21.8	21.3	15.7
Կանաչապատ գոտիների պակաս	27.8	23.4	40.2
Այլ	3.5	1.8	6.4

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Նշում. *Գումարը գերազանցում է 100%-ը, քանի որ տնային տնտեսությունները կարող էին նշել մի քանի պատասխան

5.2. Խմելու ջրի մատչելիությունը, ջրահեռացումը և աղբահանությունը

Խմելու ջրի մատչելիությունը. 2019թ.-ի հետազոտության տվյալներով կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեն հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունը՝ քաղաքաբնակ տնային տնտեսությունների 99.5%-ը և գյուղաբնակ տնային տնտեսությունների 90.6%-ը (Աղյուսակ 5.5):

Կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների 94.5%-ի մոտ ջրի ծորակը գտնվում է տանը, 5.0%-ի մոտ՝ բակում, իսկ 0.5%-ի մոտ՝ փողոցում:

Աղյուսակ 5.5. Հայաստան. Խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար 2008 և 2019թթ.-ի համեմատականը

(տոկոսներով)

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը հանրապետությունում		Քաղաքային բնակավայրերում		Գյուղական վայրերում	
	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.
Կենտրոնացված ջրամատակարարում	97.1	96.1	99.5	99.5	92.4	90.6
մինչև 1 ժամ	0.7	0.0	0.1	0.0	1.9	0.0
1-5 ժամ	31.3	5.4	31.2	2.3	31.4	12.0
6-12 ժամ	28.6	10.4	32.6	12.1	20.5	16.9
13-23 ժամ	5.7	4.9	5.9	8.2	5.3	2.1
24 ժամ	33.7	79.3	30.2	77.5	40.9	69.0
Ջրհոր, աղբյուր	1.2	0.9	0.1	0.3	3.1	2.0
Ջրամատակարարման սեփական համակարգ	0.5	2.0	0.1	0.0	1.3	5.2
Բերովի ջուր	1.1	0.1	0.2	0.1	3.0	0.2
Այլ աղբյուրներ	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.0

Աղբյուրը. *SSYUZ 2008 և 2019թթ*

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգը միշտ չէ, որ ապահովում է բավարար ջրամատակարարման ծառայություններ: 2019թ.-ին տնային տնտեսություններն օրական ջուր ունեցել են միջինը 21 ժամ: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեցող տնային տնտեսությունների միայն 79.3%-ն է ունեցել շուրջօրյա ջրամատակարարում: Չնայած դա 2008թ.-ի համեմատ ակնհայտ բարելավում է, այնուամենայնիվ, 2019թ.-ին տնային տնտեսությունների 5.4%-ը ջուր է ունեցել օրական 1-5 ժամ: Հանրապետության ոչ բոլոր բնակավայրերում է, որ բնակչությանը ջուրը մատուցվել է ամեն օր: Ամսվա ընթացքում տնային տնտեսությունները ջուր ունեցել են միջինում 30 օր:

2019թ.-ին քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունների 0.9%-ը ջուր է ունեցել 3 շաբաթ:

Գյուղական վայրերում տնային տնտեսությունների 0.4%-ը ջուր է ունեցել ամսական 1-7 օր, 0.7%-ը՝ 2 շաբաթ, 2.1%-ը՝ 3 շաբաթ:

Հանրապետությունում տնային տնտեսությունների 0.3%-ը ջուր է ունեցել ամսական 2 շաբաթ, 1.5%-ը՝ 3 շաբաթ:

Աղյուսակ 5.6. Հայաստան. Ջրամատակարարման ծառայությունների մատչելիությունն ըստ սպառման ագրեգատի քվինտիլային խմբերի, 2008 և 2019թ.

(տոկոսներով)

	Առաջին քվինտիլ		Երկրորդ քվինտիլ		Երրորդ քվինտիլ		Չորրորդ քվինտիլ		Հինգերորդ քվինտիլ	
	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.
Կենտրոնացված ջրամատակարարում	96.6	95.2	96.4	95.6	96.0	95.9	97.8	96.9	98.2	97.4
<u>մինչև 1 ժամ</u>	1.1	0.0	1.0	0.1	0.5	0.0	0.5	0.0	0.5	0.1
<u>1-5 ժամ</u>	35.5	5.7	33.8	4.6	28.6	5.8	30.1	6.4	29.4	4.4
<u>6-12 ժամ</u>	24.0	11.6	26.9	12.0	28.2	8.1	32.7	9.4	30.3	10.1
<u>13-23 ժամ</u>	4.5	4.6	6.5	4.2	6.2	4.2	5.1	6.3	6.1	5.8
<u>24 ժամ</u>	34.9	78.1	31.8	79.1	36.5	81.9	31.6	77.9	33.7	79.6
Ջրհոր, աղբյուր	1.6	1.2	1.2	1.1	1.1	1.1	1.4	0.3	0.6	.06
Ջրամատակարարման սեփական աղբյուր	0.5	2.4	0.7	1.9	0.8	2.1	0.3	2.3	0.5	1.0
Բերովի ջուր	1.0	0.0	1.7	0.2	2.0	0.0	0.3	0.0	0.7	0.5
Այլ աղբյուրներ	0.3	1.2	-	1.2	0.1	0.9	0.2	0.5	0.0	0.5

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008 և 2019թթ.*

2019թ.-ին տնային տնտեսություններում կենտրոնացված ջրամատակարարման առկայությունը, ըստ սպառման ագրեգատի քվինտիլային բաշխվածության, շատ չի տարբերվում և կազմում է 95- 97%:

Այդուհանդերձ, ոչ աղքատ տնային տնտեսությունների 10.3%-ը, աղքատ տնային տնտեսությունների 11.5%-ը և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 20.6%-ը նշել են ջրամատակարարման ծառայության վատ վիճակ (Աղյուսակ 5.4):

Ջրահեռացման կենտրոնացված համակարգ. 2019թ.-ին երկրում ավելացել է ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը՝ 2008թ.-ի համեմատ (համապատասխանաբար՝ 74.7 և 66.7 %) (Աղյուսակ 5.7):

Աղյուսակ 5.7. Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի մատչելիությունը, 2008 և 2019թթ.

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր		ք.Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական վայրեր		Ընդամենը	
	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.
Ջրահեռացման կենտրոնացված համակարգ	91.1	97.3	96.5	96.8	85.5	97.7	19.0	38.1	66.7	74.7
Ջրահեռացման կենտրոնացված համակարգը չի գործում	0.2	2.7	0.1	3.2	0.3	2.3	1.3	61.8	0.6	25.2
Կոյուղու բացակայություն	8.7	0.0	3.4	0.0	14.2	0.0	79.7	0.1	32.7	0.1

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008 և 2019թթ.*

Ինչպես երևում է աղյուսակից, ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայության առումով զգալի է քաղաք-գյուղ տարբերությունը: Ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են այլ քաղաքային բնակավայրերի գրեթե բոլոր բնակիչները (97.7%): Քաղաքային բնակավայրերի ջրահեռացման կենտրոնացված համակարգ ունեն տնային տնտեսությունների 97.3%-ը, մինչդեռ գյուղական վայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են տնային տնտեսությունների միայն 38.1%-ը: Դա լուրջ խնդիր է, քանզի կոյուղու առկայությունը շատ կարևոր է բավարար սանիտարական պայմաններ ապահովելու համար, ինչպես նաև առողջապահության տեսանկյունից:

Աղբահանությունը. 2019թ.-ին 2008թ.-ի համեմատ, երկրում ավելացել է աղբահանության կենտրոնացված համակարգից (աղբամուղ, աղբը հավաքվում է բեռնատարով, աղբակույտի մեջ) օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը (95.7%՝ 80.9%-ի դիմաց) (Աղյուսակ 5.8): Աղբահանության ծառայությունն ավելի լավ է գործում քաղաքային բնակավայրերում, քան գյուղական վայրերում, որտեղ տնային տնտեսությունները շատ հաճախ այրում կամ հորում են իրենց աղբը: Բնակչության մի մասը՝ ծայրահեղ աղքատների 11.4%-ը, աղքատների 14.5%-ը և ոչ աղքատների 16.6%-ը բողոքել են, որ աղբահանությունը վատ է իրականացվում (Աղյուսակ 5.4):

Աղյուսակ 5.8. Հայաստան. Աղբահանությունը, 2008 և 2019թթ.

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր		Ք.Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական վայրեր		Ընդամենը	
	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.	2008թ.	2019թ.
Աղբամուղ և/կամ հավաքվում է բեռնատարով. թափվում է աղբակույտի մեջ	98.0	99.9	99.5	100	96.5	99.8	47.4	89.0	80.9	95.7
Այրվում է	0.8	0.1	0.1	0.0	1.5	0.2	31.9	10.6	11.3	4.1
Հորվում է	0.4	0.0	0.1	0.0	0.6	0.0	10.4	0.2	3.8	0.1
Այլ	0.8	0.0	0.3	0.0	1.4	0.0	10.3	0.2	4.0	0.1

Աղբյուրը. *SS4ULZ 2008 և 2019թ.*

5.3. Բնակարանների ջեռուցումը

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրերի տնային տնտեսությունների գերակշիռ մասը ջեռուցել են իրենց բնակարանները: Իր կացարանը ջեռուցող տնային տնտեսությունների համամասնությունը 2019թ.-ին կազմել է 98.5% (Աղյուսակ 5.9):

Կացարանների ջեռուցման համար տնային տնտեսություններն օգտագործել են բնական գազը՝ 50.5%, փայտը՝ 34.4%, էլեկտրաէներգիան՝ 18.4% և այլն:

Աղյուսակ 5.9. Հայաստան. Կացարանների ջեռուցման տեսակները, 2018 և 2019թթ

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր		ք.Երևան		Այլ քաղաքներ		Գյուղական վայրեր		Ընդամենը	
	2018թ	2019թ	2018թ	2019թ	2018թ	2019թ	2018թ	2019թ	2018թ	2019թ
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100
Չեն ջեռուցվել	1.7	1.5	2.7	2.4	0.7	0.5	0.5	1.7	1.3	1.5
Ջեռուցվել են այդ թվում՝ ըստ օգտագործված էներգիայի տեսակների										
Կենտրոնացված ջեռուցում	99.8	98.5	97.3	97.6	99.3	99.5	99.5	98.3	98.7	98.5
Նավթ-դիզելային վառելիք	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.1	0.0	0.6	0.1	0.3
Ելեկտրաէներգիա	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.1	0.1	1.8	0.1	0.7
Գազ	20.1	28.2	23.8	34.6	15.9	21.8	1.0	3.0	12.8	18.4
Փայտ	64.9	64.6	69.6	68.2	59.7	60.8	16.2	27.9	46.4	50.5
	14.4	12.5	6.3	5.5	23.3	19.3	71.3	68.7	36.0	34.4

Աղբյուրը. *SSՀԱՀ 2018 և 2019թթ*

2019թ.-ին տնային տնտեսությունների մեծամասնության համար ջեռուցման հիմնական աղբյուր է հանդիսացել գազը՝ 50.5 տոկոս: Ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ այլ քաղաքային բնակավայրերում գազը մնում է ջեռուցման հիմնական աղբյուրը (Աղյուսակ 5.9): Իսկ գյուղական վայրերում ջեռուցման հիմնական աղբյուրը մնացել է փայտը:

2019թ.-ին կացարանների ջեռուցման համար օգտագործված սարքերի տեսակներից (Աղյուսակ 5.10) բնակչությունը առավել հաճախ օգտագործել է ինչպես ինքնաշեն վառարան (36.0%), այնպես էլ լոկալ-անհատական կաթսա (29.4%): Քաղաքային բնակավայրերում բնակչությունը նախընտրել է լոկալ-անհատական կաթսան (39.7%), այն դեպքում, երբ գյուղական բնակչությունը նախընտրել է ինքնաշեն վառարանը (72.7%):

Աղյուսակ 5.10. Հայաստան. Կացարանների ջեռուցման համար օգտագործված սարքերի տեսակները, 2019թ

(տոկոսներով)

	Քաղաքային բնակավայրեր	ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական վայրեր	Ընդամենը	
Ելեկտրական սալիկ		7.9	10.2	5.5	0.9	5.3
Ելեկտրական ջեռուցիչ		9.6	10.9	8.3	0.4	6.1
Գազօջախ		1.2	1.3	1.2	0.5	0.9
Ինքնաշեն վառարան		13.4	5.7	21.6	72.7	36.0
Գործարանային արտադրու թյան վառարան		26.3	19.5	33.6	10.5	20.3
Լոկալ-անհատական կաթսա		39.7	50.3	28.4	12.7	29.4
Լոկալ-կոլեկտիվ կաթսա, ամբողջ շենքի համար		0.7	0.8	0.5	0.3	0.5
Կենտրոնացված ջեռուցում		0.1	0.1	0.1	0.4	0.2
Այլ		1.1	1.2	0.8	1.8	1.3
Ընդամենը		100	100	100	100	100

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Աղյուսակ 5.11. Հայաստան. Ցուրտ եղանակին տուրք բավարար ջերմությամբ ապահովող տնային տնտեսությունների մասնաբաժինը, 2019թ
(տոկոսներով)

Ըստ բնակության վայրի	
Քաղաք	48.7
այդ թվում՝ ք.Երևան	47.9
այլ քաղաք	49.6
Գյուղ	55.9
Ընդամենը	51.5
Ըստ աղքատության մակարդակի	
Ոչ աղքատ	59.0
Աղքատ (առանց ծայրահեղ աղքատների)	42.5
Ծայրահեղ աղքատ	22.0
Ըստ սպասման ազդեցատի քվինտիլային խմբի	
Առաջին	37.0
Երկրորդ	49.1
Երրորդ	53.9
Չորրորդ	59.0
Հինգերորդ	66.3

Աղբյուրը. SSԿԱՀ 2019թ.

5.4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների առկայությունը

2019թ. բջջային հեռախոս ուներ տնային տնտեսությունների 97 տոկոսը, ստացիոնար հեռախոս՝ 33.1 տոկոսը:

Վերջին տարիների ընթացքում կտրուկ ավելացել է բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը, հատկապես գյուղական վայրերում, որտեղ նրանց թիվը 2019թ.-ին հասել է 97.2%-ի:

Աղյուսակ 5.12. Հայաստան. Համակարգչի և ինտերնետային կապի մատչելիությունը վերջին 12 ամիսների ընթացքում տնային տնտեսության որևէ անդամին, 2019թթ.

(տոկոսներով)

	2019թ.		
	Ընդամենը	քաղաք	գյուղ
Ընդամենը տնային տնտեսություններ	100	100	100
այդ թվում՝			
Համակարգչի հասանելիությունը տնային տնտեսության որևէ անդամին ցանկացած վայրում	59.3	65.0	50.3
Ինտերնետի հասանելիությունը տնային տնտեսության որևէ անդամին ցանկացած վայրում	66.5	70.8	59.9
Տանը մշտական և ոչ միշտ	55.1	61.4	45.4
Որև է այլ տեղում* այդ թվում՝	41.5	45.0	35.9
Աշխատավայրում	5.8	7.9	2.4
Ուսումնական հաստատությունում	2.5	3.0	1.7
Այլ անձանց տանը	3.1	4.1	1.5
Ինտերնետի մատչելիության (անվճար) կենտրոնում	0.9	1.4	0.1
Ինտերնետի մատչելիության (վճարովի) կենտրոնում	0.6	0.9	0.1
Բջջային հեռախոսի կամ այլ վայրում շարժական սարքի միջոցով	39.1	42.2	34.4

Աղբյուրը. SSԿԱՀ 2019թթ.

* Գումարը գերազանցում է ընդամենը, քանի որ մեկ անդամը կարող է օգտվել համակարգչից և տանը և այլ տեղում:

Աղյուսակ 5.13. Հայաստան. Ինտերնետային կապի մատչելիությունը տնային տնտեսության անդամներին վերջին 12 ամիսների ընթացքում ըստ անդամների սեռի և տարիքի, 2019թ.

(տոկոսներով)

	Ընդամենը բնակչու- թյուն	Սեռ		Տարիք			
		տղամարդ	կին	<5	5-14	15-24	25+
Տնային տնտեսության անդամները օգտվում են ինտերնետից	66.5	65.8	67.2	25.6	73.3	83.0	66.1
<i>Տանը մշտական կամ ոչ միշտ</i>	55.1	54.4	55.9	22.0	61.6	67.8	54.7
<i>Որևէ այլ տեղում</i>	41.5	41.6	41.4	10.3	38.3	65.0	40.9
այդ թվում՝							
Աշխատավայրում	5.8	6.0	5.6	0.0	0.1	5.6	7.4
Ուսումնական հաստատությունում	2.5	2.4	2.6	0.0	6.4	12.9	0.3
Այլ անձանց տանը	3.1	2.9	3.3	1.0	6.2	4.2	2.5
Ինտերնետի մատչելիության (անվճար) կենտրոնում	0.9	0.9	0.9	0.0	0.5	2.6	0.7
Ինտերնետի մատչելիության (վճարովի) կենտրոնում	0.6	0.7	0.5	0.0	0.7	1.2	0.6
Բջջային հեռախոսի միջոցով ցանկացած վայրում	39.1	39.2	38.9	10.2	35.0	62.8	38.4
Այլ վայրում շարժական սարքի միջոցով	0.1	0.1	0.0	0.0	0.2	0.2	0.0

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Գլուխ 6. Աղքատությունը առողջապահության և կրթության ոլորտում

6.1. Առողջապահությունը և աղքատությունը

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ թե՛ տնային տնտեսությունների, թե՛ անհատների բարգավաճման համար:

Համաձայն 2019թ.-ի ՏՏԿԱՀ-ի արդյունքների, առողջական վիճակի՝ սուբյեկտիվ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ՝ նորմալ, լավ և շատ լավ գնահատականը ստացվել է 93.4% բնակչության կողմից, իսկ վատ և շատ վատ գնահատականը՝ 6.6%-ի կողմից: Երբ առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները դիտարկվում են ըստ աղքատության մակարդակի, ապա վատառողջ են ոչ աղքատների 6.0%-ը, աղքատների՝ 4.8% և ծայրահեղ աղքատների՝ 6.6%-ը:

Աղյուսակ 6.1. Հայաստան. Առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները ըստ աղքատության մակարդակների, 2019թ.

(տոկոսներով)

Սուբյեկտիվ գնահատականները	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Ընդամենը
Շատ լավ	10.8	10.8	7.5	10.8
Լավ	55.2	61.3	58.8	56.7
Ոչ լավ, ոչ վատ	27.0	22.6	24.8	25.9
Վատ	6.0	4.8	6.6	5.6
Շատ վատ	1.0	0.9	2.3	1.0
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Հետազոտության մեկ ամսվա ընթացքում վերջին այցի ժամանակ որևէ պատճառով բուժհիմնարկների մասնագետներին դիմած բնակչության բաշխումն՝ ըստ բուժհիմնարկների մասնագետների, բերվում է ստորև.

Աղյուսակ 6.2. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժհիմնարկի մասնագետների և աղքատության մակարդակի, 2019թ.

(տոկոսներով)

Բուժհիմնարկների մասնագետների ցանկ	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Ընդամենը
Ընտանեկան բժիշկ	43.0	49.2	40.6	44.1
Մանկաբույժ	10.6	15.9	30.0	11.5
Դիագնոստիկ կենտրոն	2.8	0.7	0.0	2.4
Մասնագետ	2.1	3.2	8.4	2.3
Շտապ օգնություն	36.4	29.6	21.0	35.2
Այլ	5.1	1.4	0.0	4.5
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2019թ.

Բնակչության 44.1%-ը հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար դիմել է ընտանեկան բժշկին:

Աղյուսակ 6.3. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին դիմած բնակչության բաշխումն ըստ բուժօգնության մասնագետների և բնակչության վայրի, 2019թ.

(տոկոսներով)

Բուժօգնության մասնագետների ցանկ	Ք.Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
Ընտանեկան բժիշկ	29.2	51.2	38.6	44.1
Մանկաբույժ	16.2	10.5	13.8	11.5
Դիագնոստիկ կենտրոն	0.9	3.5	2.0	2.4
Մասնագետ	3.1	2.3	2.8	2.3
Շտապ օգնություն	45.8	28.9	38.5	35.2
Այլ	4.8	3.6	4.3	4.5
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար ք. Երևանի բնակչությունն ավելի հաճախ դիմել է շտապ օգնության, այլ քաղաքների և գյուղերի բնակչությունը՝ ընտանեկան բժշկին:

Աղյուսակ 6.4. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ օգնության համար առողջության առաջնային պահպանման ծառայություններին դիմած բնակչության վճարումների բաշխումն ըստ բուժօգնության մասնագետների, 2019թ.

(տոկոսներով)

Բուժօգնության մասնագետների ցանկ	Ընդամենը վճարվել է	այդ թվում		
		անձնակազմից որևէ մեկին գնացուցակով	նվերներ կամ ծառայություններ	խորհրդատվության հետ կապված վճարումներ (ոնկոգեն/ լաբորատոր հետազոտություն)
Ընտանեկան բժիշկ	100	13.4	8.9	77.7
Մանկաբույժ	100	28.9	14.3	56.8
Դիագնոստիկ կենտրոն	100	54.4	0.7	44.9
Մասնագետ	100	98.6	0.1	1.3
Շտապ օգնություն	100	80.5	0.6	18.9
Այլ	100	98.7	0.2	1.1
Ընդամենը	100	83.1	0.9	16.0

Աղբյուրը. *SSՀԱՀ 2019թ.*

Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ, դիագնոստիկ կենտրոնների մասնագետների օգնությանը դիմած բնակչությունը, միջինում իր ծախսերի 54.4%-ը վճարել է անձնակազմից որևէ մեկին գնացուցակով, միայն 0.7%-ը՝ նվերների տեսքով, իսկ 44.9%-ը՝ ոնկոգենի կամ լաբորատոր հետազոտության համար:

Աղյուսակ 6.5. Հայաստան. Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառներն ըստ աղքատության մակարդակի, 2019թ.

(տոկոսներով)

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
Ընդամենը	100	100	100
այդ թվում՝			
ինքնաբուժում	59.1	52.1	26.4
ֆինանսապես ի վիճակի չէի բուժվելու	12.6	24.5	49.0
շատ հեռու է	0.2	0.0	0.0
խնդիրը լուրջ չէր	7.4	7.8	19.3
կարիք չի եղել	6.3	7.9	5.3
բժիշկը բարեկամ/ընկեր է	5.6	2.5	0.0
այլ	8.8	5.2	0.0

Աղբյուրը. *SSYUZ 2019թ.*

Ըստ 2019թ.-ի SSYUZ ստացված տվյալների՝ բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների սպառողական ծախսերի 7.2%-ը կամ միջինում 3 080 դրամ:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցել է բնակչության միայն 10.5%-ը: Ըստ աղքատության մակարդակի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունք ունեցել է ծայրահեղ աղքատների 2.1%-ը, աղքատների՝ 24%-ը և ոչ աղքատների՝ 73.9%-ը, իսկ բժշկական ապահովագրություն ունեցել է ծայրահեղ աղքատների 0.1%-ը, աղքատների՝ 11.5%-ը և ոչ աղքատների՝ 88.4%-ը:

Աղյուսակ 6.6. Հայաստան. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ու ապահովագրություն ունեցողները ըստ աղքատության մակարդակների, 2019թ.

(տոկոսներով)

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
Բժշկական ապահովագրություն	88.4	11.5	0.1
Անվճար բժշկական օգնություն	73.9	24	2.1

Աղբյուրը. *SSYUZ 2019թ.*

Հետազոտված տնային տնտեսությունների ծախսերի մեջ դեղորայքի ձեռք բերման համար կատարված ծախսերը կազմել են 5.7%: Դեղորայքի ձեռք բերման համար կատարած ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով կազմել են ընդամենը 2 443 դրամ:

6.2. Կրթությունը և աղքատությունը

2019թ.-ին ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 34% և տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 37%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում համապատասխանաբար՝ 27% և 24%: Նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) տարբերվում է ըստ սպառման ազդեցատի քվինտիլային խմբերի: Առաջին քվինտիլային խմբում այն կազմել է 26%, երկրորդում՝ 31%, երրորդում և չորրորդում՝ 38% և հինգերորդում՝ 41%:

Աղյուսակ 6.7. Հայաստան. Դպրոց չհաճախելու հիմնական պատճառները (6 և ավել տարիքային խումբ), 2019թ.

(տոկոսներով)

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ
Հիվանդ է, հաշմանդամ	0.7	0.8	1.3
Ստիպված է աշխատել	1.8	2.4	3.2
Շատ թանկ է	1.3	1.6	2.4
Մոտակայքում դպրոց չկա	0.1	0.1	0.0
Ընտանեկան պատճառներ	3.5	4.7	11.3
Չի ցանկանում սովորել	6.5	10.3	20.6
Ուսանել է այնքան, որքան ցանկացել է	85.3	78.5	59.6
Կրթության ցածր որակը	0.1	0.0	0.0
Այլ (նշել)	0.7	1.6	1.6
Ընդամենը	100	100	100

Աղբյուրը. *SSYUՀ 2019թ.*

Այն տնային տնտեսությունները, որոնք 2019թ.-ին ունեին դպրոցում սովորող աշակերտ, միջինում ծախսել են մեկ աշակերտի հաշվով ամսական 7 620 դրամ, որից՝ դասագրքերի վրա՝ 6 43 դրամ, մասնավոր դասերի համար՝ 10 571 դրամ, վարձավճարի համար՝ 30 128 դրամ, ԲՈՒՀ-ի համար մասնավոր ծախսեր՝ 24 447 դրամ, իսկ կրթության այլ ծախսերի վրա՝ 949 դրամ:

Աղյուսակ 6.8. Հայաստան. 16-20 տարեկան անձանց կրթությունը չշարունակելու պատճառներն ըստ սեռի, 2019թ.

(տոկոսներով)

	Քվինտիլներ					Ընդամենը
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	
Տղաներ						
Հիվանդ է, հաշմանդամ	0.4	-	9.6	-	6.8	3.0
Ստիպված է աշխատել	-	0.5	2.7	-	-	0.7
Շատ թանկ է	0.8	12.6	4.3	2.7	-	4.5
Մոտակայքում դպրոց չկա	-	-	-	-	-	-
Ընտանեկան պատճառներ	2.2	4.2	-	6.7	-	2.6
Չի ցանկանում սովորել	11.3	12.0	16.7	23.5	7.3	14.1
Ուսանել է այնքան, որքան ցանկացել է	64.1	49.5	66.7	65.4	61.9	61.1
Կրթության ցածր որակը	-	-	-	-	-	-
Այլ (նշել)	21.2	21.2	-	1.7	24.0	14.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Աղջիկներ						
Հիվանդ է, հաշմանդամ	-	8.1	-	-	-	1.9
Ստիպված է աշխատել	6.4	2.3	6.4	-	-	4.2
Շատ թանկ է	12.1	13.2	6.1	7.9	12.4	10.8
Մոտակայքում դպրոց չկա	-	-	-	-	-	-
Ընտանեկան պատճառներ	11.8	.5	6.6	-	18.0	7.3
Չի ցանկանում սովորել	13.8	9.3	3.4	7.8	-	9.2
Ուսանել է այնքան, որքան ցանկացել է	47.5	61.8	71.5	84.3	47.7	59.5
Կրթության ցածր որակը	-	-	-	-	-	-
Այլ (նշել)	8.4	4.8	6.0	-	21.9	7.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը. *SSYUՀ 2019թ.*